

ըիշ բանի համար չեն գործածուիր, բայց եթէ իբր անկարգ եկեղեցականաց առժամանակեայ սքսորանքի տեղ : Մինչև մօտ ժամանակներս Աստանդուպօլոյ Պատրիարքները՝ յանցաւոր եկեղեցական մը պատժելու համար՝ այս մեր վանքը կաքսորէին. և մենք կրնանք բաւական ընդարձակ ցանկ մը տալ այնպիսի յանցաւորաց, որ իրենց պատիժն է տեղւոյս միարանից հետ բնակակից և սեղանակից ըլլալ, որոշեալ ժամանակի մը մէջ :

Մովորաբար վանքերն այս իմաստով գործածուելուն համար չէ՞, որ խելքը դուռնն եզրղ կրօնաւոր մը վանքի մէջ մնալը անպատուութիւն կը համարուի :

Շատ անգամ մարդ ինքիւրեն կհարցունէ թէ՞ ի՞նչ է եկեղեցւոյն այս տկարացեալ վիճակը, ինչո՞ւ եկեղեցւոյ մէջ օր ըստ օրէ գայթակղութիւնները կաւելնան, ինչո՞ւ եկեղեցւոյն նախնական ժամանակի հաւատքը և բարեպաշտութիւնը երթալով կրնուազի, ինչո՞ւ եկեղեցւոյն ողջմտութեան վրայ եղած յայտնի կամ չլռելեայն յարձակմունքները անաստանելի հոսանքով կը յառաջադիմեն, ինչո՞ւ եկեղեցւոյ պաշտօնեայքը հիմայ աշխարհականաց աչքին առանց կարեւորութեան են, ինչո՞ւ եկեղեցւոյ ընտիր պաշտօնեայքը օր ըստ օրէ կըսպառին, և կ'յաջորդեն անօնց տեղ իրենք զերենք անգամ շահելու անբաւական մարդիկներ : Այս բազմանդանակ ձեռով եղած հարցումներուն լի և բովանդակ ամփոփումը բնելով, ինչո՞ւ կրօնքը չ'յառաջադիմէր :

Քառ լեցի, որ ճշմարիտ ըլլայ այն անմիտ կարծիքը, զոր կրօնքի չ'յառաջադիմելուն պատճառ կհամարին, բնելով թէ՛ կրօնք և

զիտութիւն իրարու հակոտնեայ են, մկկը միւսին յառաջադիմութիւնը կարողելու. այս դարուս մէջ զիտութիւնք յառաջադիմելով կրօնքին բախտը վնասուեցաւ : Ասիկա տրամաբանութեան ոչ պատճառ էր : Եւ պատճառն էր : Երօնքը քրիստոնէութեան համար բնել կուզեմ, մարդոյն սրտին մէջ այն է՝ ինչ որ բոլոր տիեզերքի ընդհանուր շարժումը պատճառող մեծ երկինքը կամ մեքենայն տիեզերքի մէջ, այս մեքենայն այնպիսի զօրութիւն մը ունի՝ որ բոլոր երկինքները իր հետ կթաւալեցնէ, մինչև խորերը իւր հզօր ազդեցութիւնը կհասցունէ, և իւր շարժմամբն ու գործերովը աշխահի ներդաշնակութիւնը կանօնի մէջ կը բռնէ. այս առաջին շարժումը դադրելուն պէս, կըսեն բնախօսք, բոլոր բնութիւնը կխանգարի : Այսպէս ալ Արօնքը մտքի յառաջադիմութեան (զիտութեանց) վրայ իւր գործը և շարժումը դադարեցնելուն պէս, մարդկային միտքը կխանգարի : Աւրեմն կրօնքը զիտութեան հակասականը հաստատող եզրը չըլլալէ զատ, անոր յառաջադիմութեանը օգնող աստուածային լոյսն է. և որչափ յառաջադիմէ՞ նոյնչափ միւսը պիտի շահի :

Այս սկզբունքը ենթադրելով իբր թուաբանական ճշմարտութիւնն, վնասներ ուրիշ պատճառ մը, որմէն կրօնքը կթշնամանուի և կը հալածուի :

Քստ մեղ, այն ցաւալի պատճառը միայն կրօնքին պաշտօնեայ վիճակն է, և ոչ ուրիշ բան : Արեւմուտքի մէջ քրիստոնէութեան գայթակղութիւնները միայն պատական գերիշխանական պահանջմանց անդրողելի յամառութիւնն են, և քաղաքական

սկզբնաց դեմ, նոյն աշխարհի եկեղեցականաց ընդունայն, զարշելի և վայրասպար խաչակրութենէն ծագած է: Իսկ արևելքի մէջ, մեր վրայ խօսելով, մեր եկեղեցւոյն գայթակղութիւնները մի միայն եկեղեցականաց ճշմարիտ եկեղեցական չըլլալէն, կրօնաւորներուն ճշմարիտ կրօնաւոր չըլլալէն, վանքերուն ճշմարիտ վանք չըլլալէն, վանականներուն ստոյգ վանական չըլլալէն, մէկ խօսքով, ազգային բարձր Վուխրասեռութենէն մինչև յետին պաշտօնէութիւնը պաշտամանց սկզբունքները յետս ընդ դէմ յարգուելէն և բնաւ բանի տեղ չդրուելէն է. ասոր համար է՝ որ մեր արդի դարուն այսչափ անկարգութիւններ սպրդած են. ասոր համար է՝ որ ամեն վիճակ կամ գաւառ այսօր տակնուվրայ եղած է. ասոր համար է՝ որ կրօնքը կամ հաւատքը անմիտներու ձեռք խաղալիկ եղած է. աս ալ ըսեմ. ասոր համար է՝ որ բարիոք կհամարին շատերը աշխարհական եկեղեցականներ ունենալ քան կրօնաւոր:

Վի ստուած, մինչև երբ այս ապականութիւնը քու Վեկեղեցւոյդ մէջ. ան է քու սիրած այդիդ. երբեմն շքեաստանի սինական այս ապական անուանեցիր, ինչ կըսես այսչափ գայթակղութիւններով լեցուն Վեկեղեցւոյդ համար, այս ինչն ապրիտ յայտ. ոչ երբէք. այլ քու պաշտօնեայքդ, քու հովիւներդ, քու հաւատարիմներդ:

Սուրբ Ղուսաւորիչ կրօնաւորութեան հիմը պատուական քարերէ շինեց. իսկ արդի եպիսկոպոսներուն կամ քու զխաւոր պաշտօնէիցդ ձեռք ամեն փայտ, խոտ և եղէգն, ըստ Առաքելոյն, անոր հիմն զրուեցան. ինչպէս պիտի կրնայ այս դիւրափշրելի

և ջախջախենիւթերու վրայ հոյակապ շէնք մը բարձրանալ: Արօնաւորութեան հիմը, ըստ սահմանադրութեան սուրբ Ղուսաւորչի, Անտօնի և Արօնիղեայ ձեռք Չլակայ վանքին մէջ ոսկեղէն սկիզբ մը ունէր, իսկ մեր օրով կաւեղէն, Վաբուզողոնոսորի արձանին նման՝ որուն գլուխը ոսկի և ոտքերը հող էին: Ինչպէս պիտի կրնայ այս կաւեղէն ոտքերուն վրայ քու պաշտամունքդ կանգուն մնալ:

Ի. Վ. Գ. Ա.
ՅՈՅՍ. ապրիլ. Թի 46

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՔԼԵՆԻ ՄԻ ԽՕՄԲ

ՀՐԷԻՑ ԵՒ ՌԻԲԻՇ ՔԼԵՆԵՆԵՅԻ ԱԶԳԵՑ
ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆԵԸ ԵՒ ԲՆԵԿՈՒԹԵԱՆԵԸ
ՂԵՐԵՑ ԿՈՎԿԼՍԵԱՆ ԵՒ ԱՆԳՐԵԿՈՎԿԵԱՆ
ՍԵԱՆ ԱՇԽԱՐՀԸՄ ՄԷՋ ԵՒՍ ԵՒ ԿԼՍՊԻՑ
ԾՈՎՈՒՆ ՔՈՎԵՐԸ, (*)

Աստուածաշնչի Չորրորդ Թագաւորաց ժէ. Գլխից 6 համարին և ժԸ 10 և 11 համարաց մէջ ասուած է, թէ՛ Յուդայի Եզեկիա թագաւորին վեցերորդ տարուան և Իսրայէլացւոց Ողիա թագաւորին 9 տարին (այն ատն Իսրայէլացւոց թագաւորութիւն երկու բաժանուած էր, Իսրայէլի թագաւորութիւն որ 10 ցեղ կբաժանուէր, որոյ գլխաւոր

*) Սոյն այս յօդուածը Հրեայ Պարոն Էուծայ Էսրովիկ Չեօնըյ Ճանապարհորդին աշխատասիրութիւններէն է: Երբ յանցելու մայիս ամսոյ 22-ին նոյն Ճանապարհորդ Պարոնը եկած էր այս ի Ս. Էջմիածին, ՄայրԱթոռոյս մատենադարանէն իւր ազգայնոց վերայ տեղեկութիւնը հաւաքելոյ եւանդիամբ, (բայց որովհետեւ Հայերէն չիմանայր, եւ միայն կը փնտռէր Հրեայերէն լիզուաւ գրուած մեղադիր, ուս-